

Եթէ Ղալամքեար Տ. Յովհաննէս քհ. ի խօսքերը իրենց տառական իմաստով առնենք, պէտք է ընդունիլ թէ պատրիարքական ընտրութենէն առաջ սոսկ իբր կեսարիոյ վիճակին առաջնորդ մասնակցած է Գրիգոր վրդ. այս ընտրական գործողութեանց, սակայն միշտ կրնանք խորհիլ թէ իբր պատրիարք գացած լլլայ Սիս, վասնզի կեսարիա այդ թուականին, իր իսկ ջանքերով, այլևս էջմիածնայ վիճակ դարձած էր:

Այս եզրակացութեան կը մղուիմ իբր ընթացքը աչքի առջև ունենալով:

Ի՞նչ հանգամանքով անիկա պիտի պահանջէր ուխտագիր մը, ընտրեալ կաթողիկոսէն՝ ճանչնալու համար իր հեղինակութիւնը:

Անիկա ինքնին փաստ մը չէ՞ր որ անիկա ընտրութեան համար հաւաքուածներուն մէջ բացառիկ դիրք մը ունէր:

Իբր կեսարիոյ առաջնորդ չէր կրնար այս տեսակ պահանջ մը դնել: «Մեծ ու աւագ վարդապետ» ի դիրքը բաւական էր արդեօք այս տեսակ պահանջ մը դնելու:

Թերևս իր ժամանակին ամենէն ուսումնական ու ամենէն կարող եկեղեցականը լլլալու հանգամանքը, ինչպէս նաև ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռին վր-